66-ՐԴ ՆԻՍՏ

4 փետրվարի 1919թ.

Նախագահում է *Դավիթ Զուբյանը:*

Նախագահող - Նիստը հայտարարում եմ բացված: Առաջարկում եմ քարտուղարին կարդալ օրակարգը:

Քարտուղար - Օրակարգի հարցերն են.

1. Զեկուցում Հայաստանի Խորհուրդ մտած գործերի մասին.
2. Խմբագրական հանձնաժողովի զեկուցումը Կարսում հաշտարար բաժանումներ բանալու մասին.
3. Մանդատային հանձնաժողովի զեկուցումը.
4. Ներքին գործոց մինիստրության պատասխանը Հայ ժողովրդական կուսակցության հարցման.
5. Կառավարության զեկուցումը Ղամարլուի անցքերի մասին.
6. Ֆինանսների մինիստրի զեկուցումը պետական անցյալ տարվա հարկերի մասին.
7. Օրինագիծ բամբակի գնման համար ֆինանսների մինիստրին 10 միլիոն վարկ բանալու մասին.
8. Օրինագիծ ֆելդշերական պարտադիր կուրսերի մասին.
9. Քաղաքների միության ծառայողների լիկվիդացիայի հարցը.
10. Մինաս Բերբերյանի թաղման ծախքերի խնդիրը.
11. Օրինագիծ Պարսկաստան ուղարկվելիք պատվիրակության համար 30000 ռ[ուբլի] վարկ բանալու մասին.
12. Ամերիկա ուղարկվելիք դելեգացիայի խնդիրը.
13. Օրինագիծ խնամատարության և աշխատանքի մինիստրություն հիմնելու մասին.
14. Ընթացիկ գործեր:

Քարտուղար - Կառավարության կողմից պառլամենտին առաջարկված են հետևյալ օրինագծերը. Զեմստվոյի և քաղաքային ինքնավարությունների մասին, մի քանի գավառներում ուժեղացրած կարգուկանոն մտցնելու մասին, էպիդեմիայի ժամանակ պետական ծառայողներին նպաստ տալու մասին: Ապա կան եսաուլ Աբուխովի մասին, մուսուլմանական ֆրակցիայի առաջարկը գավառ պառլամենտական հանձնաժողով ուղարկելու մասին, Գր. Տուրեցկու խնդիրը անունը Սարդարապատսկի փոխելու մասին, երկաթուղու ծառայողների խնդիրը ռոճիկների հավելման մասին:

Նախագահող - Խմբագրական հանձնաժողովի կողմից զեկուցող Աղբալյանը բացակա է: Առաջարկում եմ զեկուցել մանդատային հանձնաժողովին:

Հ. Սարգսյան - Կառավարությունը երկու ամիս առաջ ստացավ մի թուղթ, որով հայտարարվում է, թե դարձյալ կազմված է Երևանի նահանգային մուսուլման խորհուրդ, որը հետ է կանչում մուսուլման պատգամավորներից մի քանիսին և նրանց տեղը նշանակում է նորերին: Մանդատային հանձնաժողովը որոշեց այս հարցը դնել խորհրդի առաջ:

Նախագահող - Այդպիսով ուրեմն մանդատային հանձնաժողովը դնում է մեր առաջ երկու խնդիր. նախ՝ մուսուլման ազգային խորհրդի ճանաչման և ապա՝ նրա նոր պատգամավորներ նշանակելը:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Զեկուցողը մոռացավ շեշտել, որ այն խորհուրդը իրեն անվանում է ոչ թե Հայաստանի մուսուլման[ական] ազգային խորհուրդ, այլ գոյություն չունեցող Երևանի նահանգի մուսուլման ազգային խորհուրդ:

Նախագահող - Դնում եմ Մակինսկուն պառլամենտի վախճանված անդամ Իսմայիլովի տեղ նշանակելու հարցը:

Վրացյան - Երևանում գոյություն է ունեցել մուսուլման ազգային խորհուրդ, ապա վերացվել է: Այնուհետև մուսուլմանների վերադարձով նա դարձյալ կազմվել է: Եթե կանգնելու լինենք այն տեսակետի վրա, որ այդ խորհուրդ պիտի ընտրվի լիներ, իհարկե քննադատության չէր դիմանա նա, սակայն մեր խորհուրդներն էլ նույն դրության մեջ են: Եթե մուսուլման բնակչության կողմից բողոքներ չկան, մեր կարծիքով պիտի նրա օրինականությունը ճանաչել: Եթե այդ այդպես է, ուրեմն պիտի ընդունվի նաև պառլամենտի մեռած անդամի տեղ նոր անդամ ուղարկելու առաջարկը:

Նախագահող - Ո՞վ է դեմ Մակինսկու պառլամենտի անդամ լինելուն՝ հանգուցյալ Իսմայիլովի տեղ: Ընդունվում է: Անցնում ենք երկրորդ խնդրին, թե ինչ պայմաններում պատգամավորն համարվում է հրաժարված:

Վրացյան - Այս խնդիրը նախատեսված է մեր նակազում: Պատգամավորը ինքը պիտի հրաժարական տա: Երկարատև բացակայությունը և օրապահիկ չստանալը դեռ իրավունք չեն տալիս մեզ բացակա երկու մուսուլման պատգամավորներին հրաժարված համարել: Հետևապես մուսուլման ազգային խորհուրդը եթե ցանկանում է բացակա երկու անդամների տեղ նորերին նշանակել, այդ դեպքում պիտի աշխատի նրանցից հրաժարականներ ներկայացնել: Քանի որ չկան այդ հրաժարականները, ուրեմն և հնարավոր չէ նրանց տեղը նորերին նշանակել:

Երվանդ Հարությունյան - Մեր նակազը սեյմից է թարգմանված: Սակայն մեր պառլամենտը նրա պես ընտրյալներից չէ բաղկացած, այլ կազմված է կուսակցությունների ներկայացուցիչներից: Եթե մի որևէ անդամ չի հաճախում, այն ժամանակ մի որևէ կուսակցություն կարող է ուղարկել իր մի ուրիշ ներկայացուցչին: Դրա համար էլ կարիք չկա գրավոր հրաժարական ուզել: Սակայն այստեղ կարևոր է մի այլ հանգամանք: Մուսուլման ազգային խորհուրդը շեշտում է իր՝ Երևանի նահանգի և ոչ թե Հայաստանի մուսուլմանության կազմակերպություն լինելը, մի բան, որ ակնարկում է հայահպատակ չլինելու հանգամանքը: Եթե նրանք կընդունեն առանց այլևայլության մեր հանրապետության հպատակությունը, այն ժամանակ կարող են իրենց ցանկացած փոփոխությունները մտցնել մուսուլման ֆրակցիայի մեջ:

Վրացյան - Անդրկովկասյան սեյմը կազմված էր մեր խորհրդարանի ձևով: Երկու տեղն էլ դեր խաղացողները կուսակցություններն են: Սակայն այս հանգամանքը ոչ մի նշանակություն չունի: Խնդիրը նրանումն է, որ ընդունված է նակազ, ուրեմն և պիտի նրա վրա հենվել կամ էլ դնել նրա այս կամ այն կետի փոփոխության հարցը: Մեր կարծիքով ավելորդ է բարձրացնել նակազի մի որևէ կետի փոփոխման հարցը և պիտի պահանջել, որ մուսուլման ազգային խորհուրդը ներկայացնի բացակա անդամների հրաժարականները:

Ազատյան - Սեյմը չի կարելի համեմատել խորհրդարանի հետ: Նրա 1/3-ը ընտրվի էր: Այստեղ կուսակցություններին իրավունք է տրվում հետ կանչել մի որևէ անդամի: Բացակա պատգամավորները կարող են մի քանի ամիս ցույց չտալ իրենց տեղը: Այնինչ, այժմ անհրաժեշտ է մեզ համար մուսուլման ֆրակցիայի

լրիվ կազմը՝ հայ-թուրքական հարաբերությունները բարելավելու համար: Պիտի ոչ թե նակազով, այլ նպատակահարմարությամբ առաջնորդվել: Եթե դա էլ չի ընդունվում, պիտի դնել նակազի դրան վերաբերող կետի փոփոխման հարցը:

Բաբայան - Խորհրդարանից բացակայող պատգամավորները մոտիկ անցյալում Երևանում էին, սակայն հրաժարական չներկայացրին: Վաղը կարող են վերադառնալ և երբ իմանան, որ մենք առանց նրանց կամքը հարցնելու իրենց հրաժարեցրել ենք, այն ժամանակ բարդություն կծագի: Դիմենք մուսուլման ազգային խորհրդին, որ ամեն կերպ աշխատի հրաժարականներ ձեռք բերել:

Զուբյան - Քվեարկության եմ դնում սոցիալ-դեմոկրատների բանաձևը՝ առանց հրաժարականների նոր մուսուլման պատգամավորներ ընդունելու մասին:

Վրացյան - Դա չի կարող քվեարկվել, քանի որ նակազին դեմ է:

Նախագահող - Այն ժամանակ պիտի առաջուց այս հարցը չքննվեր: Բայց քանի որ քննվել է, այն ժամանակ պիտի նաև քննության արդյունքը քվեարկվի:

Վրացյան - Բացատրությունը սխալ է: Ես իբրև ժողովական չգիտեմ, թե եթե նախագահը նակազին դեմ է գնում, ինչպես վարվեմ նրա հետ:

Նախագահող - Իմ բացատրությունը ճիշտ համարելով, դիմում եմ քվեարկության:

Բուդաղյան - Նախագահը պիտի հետևի օրենքին: Նախագահին հայտնի է, որ իր վարմունքը օրենքին դեմ է, բայց համենայն դեպս շարունակում է այն: Մենք դեռ ոչ մի եզրակացության չենք հանգած: Շփոթությունն առաջ եկավ շնորհիվ նախագահի: Մենք չենք կարող այդպիսի հակաօրինական նիստին ներկա լինել:

Երևանի Հարությունյան - Օրենքը որոշ չէ: Առաջարկում եմ փոփոխություն մտցնել նակազի համապատասխան կետի մեջ:

Նախագահող - Ընդունում եմ պատգամավոր Վրացյանի և Բուդաղյանի նկատողությունները: Բայց դրանք պետք է արվեն սկզբից: Հանում եմ քննությունից այս խնդիրը և դնում եմ նակազի՝ պատգամավորների հրաժարման վերաբերյալ կետը:

Բուդաղյան - Օրակարգի մեջ այդպիսի հարց չկա:

Տեր-Խաչատրյան - Մեր ֆրակցիան հիմնվում է նակազի վրա: Այլ կարծիքներ մեր ֆրակցիայից կրում են անհատական բնույթ: Եթե կարիք է զգացվում նակազի մի որևէ կետի փոփոխության, այն ժամանակ պիտի հանձնել այս հարցն օրենսդրական հանձնաժողովին:

Վրացյան - Նակազի 199 և 200 հոդվածները այդ մասին որոշ են արտահայտվում: Նման հարցեր պիտի նախ և առաջ դրվի հանձնաժողովների քննության: Եվ խնդրում ենք նախագահին՝ նակազի սահմաններից դուրս չգալ:

Նախագահող - Իմ առաջարկը հետ եմ վերցնում:

Ազատյան - Այստեղ նակազին հակառակ բան չի արվում: Սա իմ առաջարկն է: Կենտրոնը կանգնած է օրենքի վրա, սակայն այս դեպքում մենք հետևողական լինելու համար չպիտի շարունակենք մեր նիստը, քանի որ զեկուցումները գրավոր չեն և այլն:

Նախագահող - Պատգամավոր Վրացյանը ձևականորեն ճիշտ է, դրա համար էլ վերցնում եմ քննությունից:

Աղբալյան - Խմբագրական հանձնաժողովի կողմից կարդում է Կարսում երեք հաշտարար և երեք քննիչ բաժանմունք հիմնելու օրինագիծը:

Օրենք
Կարսի շրջանում երեք հաշտարար և երեք քննիչ բաժանմունք բանալու մասին

Կարսի շրջանում բացվում են երեք հաշտարար և երեք քննիչ բաժանմունք.

1. Կարսի հաշտարար և քննիչ բաժանմունք Կարս քաղաքում.
2. Կաղզվանի հաշտարար և քննիչ բաժանմունք Կաղզվան քաղաքում.
3. Արդահան-Օլթու հաշտարար և քննիչ բաժանմունք Արդահան քաղաքում:.

Օրենքն անփոփոխ ընդունվում է և վերջնականապես հաստատվում խորհրդի կողմից:

Նախագահող - Ներքին գործերի մինիստրի հիվանդության պատճառով այսօր նրա պատասխանը չի լինի: Անցնում ենք կառավարության զեկուցման Ղամարլուի շրջանի դեպքերի մասին:

Մինիստր-նախագահ - Կառավարությունը ոչինչ չունի զեկուցելու: Այդ առթիվ ձեզ զեկուցում տրված է անցյալ օրը:

Ազատյան - Մինչև այսօր որովհետև փոփոխություններ են տեղի ունեցել, մենք առաջարկում ենք այդ նոր փոփոխությունների մասին զեկուցվի խորհրդում:

Մինիստր-նախագահ - Ազատյանի դիտողությունը ճիշտ է: Ես մոռացա ասել: Խորհրդի մասնավոր խորհրդակցության ժամանակ ես ասացի, որ Նախիջևանի անգլիական զինվորական նահանգապետը պահանջել էր, որ մեր զորքերը հետ քաշենք մինչև Յուվա: Գնդապետ Լաուտենը այդ պահանջը դրել էր արտաքին գործերի և զինվորական մինիստրներին, որոնք մի շարք պատճառաբանություններ են բերել, որ իրենք չեն կարող այդ պայմանները ընդունել: Ի վերջո նրանք պատասխանել էին գնդապետ Լաուտենին, որ այդ հարցը կառավարության գործն է:

Այդ հարցը դրվեց կառավարության խորհրդակցությանը, որտեղ ներկա էր նաև գնդապետ Լաուտենը: Մտքերի երկար փոխանակությունից հետո գնդապետ Լաուտենը հետ վերցրեց իր առաջարկը և նոր առաջարկ արեց, որը կառավարության համար ընդունելի էր և որը երկու կողմից ստորագրվեց: Ընդհանուր տեսակետները արգելք էին հանդիսանում հարմար բանակցություններին: Անգլիական կառավարությունը ուզում էր հիմնել Նախիջևանի համար մի ժամանակավոր կարգ գնդապետ Լաուտենի հրամանատարության ներքո: Պայմանագրում սահմանները չէր որոշված: Արտոնություն էր տրված գնդապետ Լաուտենին այդ գեներալ-գուբերնատորստվոյի սահմանների մեջ մտցնել այն բոլոր մուսուլման ազգաբնակությունը, որ չի ենթարկվում հայկական կառավարությանը: Այս տեսակետից գնդապետ Լաուտենը ամբողջ Վեդիբասարի շրջանը համարում էր իր գեներալ-գուբերնատորստվոյի մեջ, ուրեմն և այդ տեղերից հայկական զորքերը պետք է հետ քաշվեին:

Հայաստանի կառավարությունը այդ պայմանների հետ հաշտվել չէր կարող, որովհետև փաստորեն վերոհիշյալ շրջաններում մեր ադմինիստրացիան է գործում, և դա մեր տերիտորիան է:

Երկար վիճաբանություններից հետո Հայաստանի կառավարությունը հաշտվեց այն դրության հետ, որ անգլիական զորքը կարող է լինել որոշ շրջաններում ժամանակավորապես կարգ հաստատելու համար, միաժամանակ և Հայաստանի կառավարությունը պնդում է, որ վերոհիշյալ շրջաններում հայկական զորքեր էլ պետք է լինեն ի նշան նրա, որ դրանք Հայաստանին են պատկանում: Եվ դա պետք է տարածվի մինչև Գայլի դրունք: Այդ տեղերում Հայաստանի վարչություն պետք է լինի: Մինչև Շարուր երկաթուղային գիծը անցնում է մեր ձեռքը:

Գնդապետ Լաուտենը ասաց, որ ինքը կաջակցի գաղթականների վերադարձը Պարսկաստանից Նախիջևանի վրայով: Ինչ վերաբերում է հացի ներմուծմանը, նա խոստացավ, որ 10.000 փութ հացը կուղարկի և հաղորդակցությունը կվերականգնի:

Այսօր տեղս եկավ անգլիական մի գեներալ հատուկ հանձնարարությամբ: Սա ըստ երևույթին միմիայն Ղամարլուի դեպքերի առթիվ է եկել:

Նախագահող - Անցնում ենք ֆինանսների մինիստրի զեկուցմանը հարկերի մասին:

Ֆինանսների մինիստրի պաշտոնակատար - Էսդեկների հարցումներին ի պատասխան կասեմ հետևյալը:

Հարկերը հավաքվել են նվազագույն չափով, որը բացատրվում է տաճիկների վայրագություններից և ժողովրդի տնտեսության քայքայումից: Բայց այժմ դրությունը լավ է, հարկը կանոնավոր կհավաքվի: Շատ տեղերից դիմել են մեզ՝ հարկերը թեթևացնելու համար: Այդ խնդիրը այժմ քննվում է: Առաջարկում են քաղաքային տուրքը փոփոխել, հողային տուրքը վերացնել: Այդ բոլոր խնդիրները քննվում են և իրենց վերջնական լուծումը դեռ չեն ստացել:

Մինչև հիմա ստացել ենք հետևյալ հարկերը.

Հողային տուրք գյուղական և կալվածատիրական հողերից	135939 [ռ] 61[կ]
Պետական տուրք	25301[ռ] 95[կ]
Հողային տուրք քաղաքներին պատկանող հողերից	109969[ռ] 93[կ]
Եկամտային հարկ	30611[ռ] 79[կ]
Հիմնական և լրացուցիչ արհեստագործական տուրք (промысловый налог)	67362[ռ] 43[կ]
Տուրք դրամական կապիտալներից	1517[ռ] 43[կ]
Ակցիզային տուրքեր (անուղղակի հարկ)	45424[ռ] 93[կ]
Մուտք դրոշմանիշների վաճառքից	41548[ռ] 98[կ]
Տուգանքներ և պատահական մուտքեր	2967[ռ] 99[կ]
Ձեմստվային տուրքեր	109104[ռ] 21[կ]
Ընդամենը՝	569749[ռ] 28[կ]

Մելիք-Աղաջանյան - Երկաթուղիներից ևս հարկեր են ստացվում և առանց գանձարան մտնելու բաժանվում են ծառայողների մեջ: Եթե դա ճիշտ է, ինչու՞:

Ֆին[անսների] մին[իստրի] պաշտ[ոնակատար] - Անցյալում այդպես է եղել, բայց այժմ վերացել է:

Նախագահող - Հայտարարում եմ 15 րոպե ընդմիջում:

Նիստը վերաբացվում է Գ. Տեր-Խաչատրյանի նախագահությամբ:

Նախագահող - Անցնում ենք ֆինանսների մինիստրին բամբակ գնելու համար 10 միլիոն վարկ բանալու խնդրին:

Այս առթիվ պետք է զեկուցի պատգամավոր Աղբալյանը:

Աղբալյան - Անցյալ անգամ այս խնդիրը հետաձգվեց, որպեսզի ֆինանսների մինիստրը զեկուցում տա: Քանի որ ֆինանսների մինիստրի պաշտոնակատարը այստեղ է, պետք է նա զեկուցի:

Ֆինանսների մինիստրի պաշտոնակատար - Այն կասկածները, որոնք հայտնվեցին նախկին նիստում բամբակի վնասի նկատմամբ, անհիմն են: Չնայած մենք կտրված ենք արտաքին աշխարհից, բայց դեռ ամառը եվրոպական շուկայում մեր փողով բամբակի գինը արժեր 500 ռուբլի: Բացի այդ տեղեկություն կա, որ Ուկրաինան և Կուբանը պատրաստ են բամբակի հետ ցորենը փոխել, տալով մեկ փութ բամբակին 10 փութ ցորեն:

Մենք շուտով ստանալու ենք 80 միլիոն ռուբլի փող: Անհրաժեշտ է այդ գումարի փոխարեն ունենալ հում նյութ՝ մնայուն արժեք:

Ադրբեջանում բամբակի փութը արժե 25 ռուբլի: Այս բոլոր տվյալներն ի նկատի ունենալով անհրաժեշտ է 10 միլիոն ռուբլի բաց թողնել ֆինանսների մինիստրին:

Վրացյան - Հայտնի է, որ վերագրված վայրերում սպեկուլյանտները էժան գնով բամբակ են առնում և պետությանը վաճառում, մինչդեռ բամբակի մոնոպոլիա է հայտարարված: Ի՞նչ միջոցներ է ձեռք առել մինիստրը սպեկուլյանտների դեմ և երկրորդ՝ ինչու՞ մինչև հիմա չի հավաքվել բամբակը:

Ֆին[անսների] մին[իստրի] պաշտ[ոնակատար] - Ճիշտ է, որ բամբակը շատ տեղերում էժան գներով անցնում է սպեկուլյանտներին: Մենք գումար չունենք բամբակի գնումը կատարելու համար: Օրինագիծը քննելիս մի թյուր կարծիք է եղել, թե բամբակը խոշոր կապիտալիստների մոտ է, բայց դա չարդարացավ: Բամբակը մեծ մասամբ գյուղացու մոտ է: Բացի այդ, հայտնի չէր, թե ինչ գնով կարելի էր գնել չմաքրած բամբակը: Գյուղացին ստացականներով բամբակ չի տալիս: Այժմ ծրագրվում է բացել պահեստներ չմաքրած բամբակի համար:

Վրացյան - Տաճիկները մեծ քանակությամբ բամբակ են տեղափոխել Կարս: Հետաքրքիր է իմանալ, այդ բամբակը Ղարսու՞մն է: Եթե այո, ի՞նչ միջոցներ են ձեռք առնված կառավարության կողմից հետ ստանալու բամբակը:

Ֆին[անսների] մին[իստրի] պաշտ[ոնակատար] - Այդ առթիվ արտաքին գործոց մինիստրը պետք է դիմեր դաշնակիցներին, չգիտեմ՝ դիմե՞լ է, թե ոչ:

Մինիստր-նախագահ - Հունվարի 29-ից հետո անգլիացիները թույլ չեն տալիս ոչ մի ապրանք տեղափոխել Կարսից: Հիմա չգիտենք, դրանից առաջ բամբակը տեղափոխե՞լ են, թե՞ ոչ:

Վրացյան - Օրինագիծը պետք է ընդունել: Բայց պետք է ուշադրություն դարձնել բամբակատեր գյուղացիների գանգատների վրա: Բամբակի գործը շահի աղբյուր է դարձել: Կառավարության ներկայացուցիչները չմաքրած բամբակը չեն հավաքում, որի հետևանքով գյուղացին իր բամբակը ծախում է էժան գնով: Եվ այդպես սպեկուլյանտները բավականին օգտվում են: Որպեսզի այդ զեղծումները և սպեկուլյացիան չկատարվի, կառավարությունը որոշ ավանս պետք է բաց թողնի գյուղացիներին՝ չմաքրած բամբակը գնելու համար, երկրորդ՝ կառավարությունը պետք է հսկիչներ ունենա և երրորդ՝ փութացնել պահեստի խնդիրը:

Ալ. Մելիք-Աղաջանյան - Մեր ֆրակցիան օրինագծի դեմ ոչինչ չունի: Մենք ևս կարծում ենք, որ վճարումները պետք է կատարել: Բայց օրինագծի մեջ միայն մի ուղղում ենք մտցնում, այն է՝ վճարումները կատարել նախ և առաջ մանր վաճառականներից և գյուղացիներից սկսած, որովհետև ամենից շատ առկա կարիք ունեն դրամի՝ իրենց քայքայված տնտեսությունը բարելավելու համար: Իսկ մեծ վաճառականները ոչինչ չեն կորցնի, եթե բավականան պետության տված անդորրագրերով, մինչև գանձարանն ի վիճակի կլինի պարտքը վճարելու:

Պ. Զաքարյան - Ես տեսնում եմ, որ խոսքը տեղ չի հասնելու, քանի որ ամբողջ խորհուրդը համարյա մի կարծիք ունի: Որովհետև խնդիրը չափազանց լուրջ է, ես հարկ եմ համարում մի քանի խոսք ասել բամբակի գնումների մասին: Ֆինանսական մինիստրության տեղեկությունները շատ են պակասավոր: Ամենից առաջ նոքա պետք է պատճառաբանված և գրավոր լինեին, որովհետև անմիտ է բամբակի գնումները կատարել՝ հենվելով Լիվերպուլի շուկայի անցյալ տարվա գների վրա: Այդ գները հիմա փոփոխված կլինեն, այնպես որ չի կարելի առաջնորդվել այդ հին գներով: Պատերազմի պատճառով ֆրախտները շատ էին թանկ, որովհետև տեղափոխության բոլոր միջոցները պատերազմական կարիքներին էին տրամադրված: Բացի այդ, ստորջրյա ականների և այլ պատճառներով բամբակատերերը խոշոր ապահովագրական ընկերություններին որոշ գումար էին վճարում՝ ապահովելով իրենց ապրանքը զանազան պատահարներից: Այժմ որովհետև պատերազմը վերջացել է, անշուշտ, այդ գներն էլ փոփոխված են: Շատերը արդարացնում են բամբակի գնումը, պատճառաբանելով, թե այդպիսով մենք մեզ համար իրական արժեք ենք ստեղծում: Բայց չէ՞ որ վերջիվերջո այդ բամբակը մսխելու ենք: Ասում են, թե Ուկրաինան մի փութ բամբակին 10 փութ ցորեն կտա: Շատ լավ, բայց ինչքան կարող է սպառել նա: Նոքա կպահանջեն 10-15.000 փութ բամբակ, իսկ մնացածն ինչ պիտի անենք: Չենք կարող արտահանել Եվրոպա, որովհետև եվրոպական շուկաներում մեր բամբակը չի ծախվի: Մերից ավելի լավ և ծեռնտուն կա այնտեղ: Բամբակի գնումով մենք սպեկուլյանտների բանն ենք սարքում, որովհետև նոքա մեզնից ավելի նպաստավոր գներով են հավաքում բամբակը և մեզ վրա խոշոր օգուտներով ծախում: Ես նորից կրկնում եմ, որ բամբակի գնման հարցը կարոտ է բազմակողմանի լուսաբանության:

Տ. Մուշեղյան - Մեր ֆրակցիան միանում է էսդեկների առաջարկին: Ճիշտ է, որ եղած կասկածներն անհիմն չեն, որ մենք չգիտենք դրսի գները և այլն: Այս բոլորն ի նկատի ունենալով, մենք դեմ չենք օրինագծին, որի մեջ հիշված գումարը մեզ համար պետական նպաստի բնույթ ունի մանր սեփականատերերի նկատմամբ: Շատերը վախենում են սպեկուլյանտներից, բայց առևտրական տեսակետով ամենից հարմար և նպաստավոր առևտուրը կարելի է կատարել նրանց հետ, որովհետև նոքա կարող են կարճ ժամանակում ապրանք հավաքել: Մեր ֆրակ-

ցիան ևս առաջարկում է տալ առաջ մանր սեփականատերերին, հետո оптовик-ներին* և այն էլ հատուկ օրինագծով:

Հ[այկ] Սարգսյան - Մի քանի շրջաններ հարմարեցված են գարնանացանի համար, օրինակ՝ գարի սերմելու համար, բայց այդ արդեն ուշ է: Պետք է մտածել հետագա օրերի մասին, որոնք ներկայից ավելի վատթար կարող են լինել: Պետք է ցանել բոլոր հողերը, և ֆինանսական մինիստրությունը պիտի մշակի օրինագիծ հետևյալ տարվա բամբակի ցանքսի մասին: Բամբակ արտադրող մենք մի քանի շրջաններ ունենք, որոնց մասին հենց այժմյանից պիտի հոգալ: Այդ շրջաններում բամբակի գները առաջվանը չեն մնալու: Ժողովրդին պիտի սերմ տալ, հետո անհրաժեշտ է նաև ավանս տալ, որովհետև բամբակը մեր միակ բերքն է, որ կարող ենք արտահանել: Նորմալ ժամանակ բամբակի գինը ցորենի գնից 12 անգամ բարձր է եղել, իսկ 1 և 10-ի հարաբերությունը մշտական է:

Հ. Մելիքյան - Պատգամավոր Սարգսյանին պիտի առարկեմ, որովհետև մեր բյուջետի համար վտանգավոր է գյուղացուն ավանս տալ: Մենք այժմյանից չենք կարող իմանալ, թե հետո ինչ գներ կարող են լինել և ուրեմն չենք կարող այժմյանից իսկ խոսք տալ գյուղացիներին, թե նրանց բամբակը պիտի գնենք: Զաքարյանի ասածը, թե բամբակի գնումով մենք սպեկուլյանտների բանն ենք դրստում, սխալ է, որովհետև բամբակը 49 ռ[ուբլի] 50 կ[ոպեկով] ծախելով մեզ վրա, նոքա այնքան խոշոր շահ չեն ունենում: Բամբակը միշտ էլ արժեքավոր ապրանք է և ուզած ժամանակ կարելի է օգուտով ծախել, այնպես որ իզուր են շատերը կասկածում, թե մենք վնաս կանենք: Անգամ եթե Ռուսաստանում ծախենք, մենք էլի շահած կլինենք: Մեր շուկան միշտ էլ եղել է Մոսկվան և հավատացնում եմ, որ առաջին հարմար առիթին մեր ամբողջ բամբակը ձեռնտու գներով կսպառվի, որովհետև պահանջը չափազանց մեծ է: Բամբակի գնումը ունի և այն օգուտը, որ մենք միշտ կանխիկ դրամ կունենանք: Ձախակողմն առաջարկում է տալ առաջ փոքր վաճառականներին, հետո՝ մեծերին և այն էլ առանձին օրինագիծ ներկայացնելով: Բայց եթե ծանր է փոքր սեփականատերերի դրությունը, ավելի ևս անտանելի է մեծերինը, որովհետև նոքա այժմ բանկերին տոկոս են վճարում: Գյուղերում ևս պիտի կազմակերպել բամբակը հատուկ մարդկանց միջոցով, և դրա համար պիտի որոշել հում բամբակի գինը: Այդ բանը կունենա և այն օգուտը, որ մենք սպեկուլյանտների գործերին վերջ կդնենք: Ֆինանսների մինիստրությունը հատուկ ագենտների միջոցով պիտի կազմակերպի բամբակի գնման գործը գավառում:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Օրինագիծը առաջին անգամ քննելու ժամանակ ես ասել եմ, որ բամբակը մեր ոսկու ֆոնդի հիմքն է կազմելու: Կենտրոնն այն ժամանակ քննության բռնվեց սոցիալիստների հետ և բամբակին այնպիսի մի չնչին գին նշանակեց, որ ոչ ոք եկող տարի բամբակ չի ցանի: Պատգամավոր Սարգսյանի առաջարկն անգործնական է և այդ գնով, կրկնում եմ, ոչ ոք բամբակ չի ցանի: Ուրեմն անհրաժեշտ է բամբակի գինը բարձրացնել:

Հ. Ազատյան - Գյուղացուն եթե պետությունը աջակցություն ցույց տա, հեշտությամբ կարելի է համոզել՝ բամբակը պետության վաճառելու համար: Ռուսաստանը դեռ խաղաղ ժամանակ բամբակի մեծ կարիք ուներ և դրսից էր ստանում այդ բամբակը: Ուրիշ երկրներում օրինակ՝ Անգլիայում և Ամերիկայում, այժմ բամբակի, ընդհանրապես մանուֆակտուրայի մեծ սով է և հնարավոր է, որ մեր բամբակի մի խոշոր մասն արտահանվի Լիվերպուլ: Բամբակի վճարումները կատարելիս մեր ֆրակցիան պնդում է, որ առաջ պիտի վճարել փոքրերին, որովհետև քիչ փող ունենք և հետո կտանք մեծ արդյունաբերողներին: Դա այն օգուտը կունենա, որ գյուղացու դրությունն էլ կբարելավվի:

Ֆին[անսների] մին[իստրի] պաշտոնակատար - Ես իմ զեկուցման մեջ ասացի, որ ֆինանսների մինիստրությունն առաջ կվճարի փոքրերին, հետո՝ մեծերին:

Աղբալյան - Կարդում է օրինագիծը:

---

* Մեծածախները:-Ծանոթ.կազմ.:

1. В дополнение законов о монополизации хлопка от 11 сентября и 3 декабря сего года представить Министру Финансов права устанавливать способы утилизации и реализации хлопка с определением в каждом отдельном случае условий и цен с одобрения Советом Министров.

Փոփոխություն չկա:

2. Отпустить из средств Государственного Казначейства в распоряжение Министра Финансов десять миллионов рублей на выплату собственникам хлопка, приобретаемого по утвержденной Советом Армении монопольной цен, стоимость хлопка и на производство накладных расходов, связанных с приемкой, хранением и перевозкой хлопка.

Մուշեղյան - Էսդեկների հավելումը կենսական անհրաժեշտություն է, որովհետև, ինչպես ասացի, այդպիսով մենք բարելաված կլինենք մեր գյուղացիների դրությունը և բացի այդ, հարկավոր է կոնտրոլի ենթարկել մեծ քանակությամբ գնողների գործունեությունը:

Ս. Տ[եր]-Մարտիրոսյան - Մեր կարծիքով չպետք է ընդունել այդ հավելումը, որովհետև այդպիսով բավական խոչընդոտներ կառաջանան: Ավելի լավ է ընդունել ֆինանսների մինիստրի օրինագիծն ու առաջարկությունն առանց որևէ հավելման կամ փոփոխության:

Վրացյան - Ֆինանսների մինիստրի պաշտոնակատարն ասաց, որ առաջ փոքրերին կտա, հետո՝ մեծերին: Կարծում եմ, որ պիտի գոհանալ դրանով: Առաջարկում եմ ֆրակցիաներից հատուկ կոմիսիա կազմել՝ բամբակի վճարումները կատարելու համար:

Ազատյան - Հնարավոր է, որ առաջ խոշորները ստանան, իսկ դրա պատճառով կտուժի մեր գյուղացիությունը, որի տնտեսությունն առանց այն էլ քայքայված է: Առաջարկում եմ առաջ փոքրերի բամբակը գնել և վճարել, իսկ մեծ արդյունաբերողների բամբակը թող մնա, եթե պետք եղավ, մենք կգնենք և կվճարենք:

Բուդաղյան - Ախր էդպես չի կարելի: Կարելի է փողը ուշ տալ, բայց մենք ոչ մի իրավունք չունենք մեծ բամբակատերերին ասելու, թե բամբակդ մի ծախիր, սպասիր մենք իմանանք շուկայի գները, եթե ձեռնտու եղավ՝ կգնենք, եթե ոչ, ինչ կուզես արա: Պետք է մի հաստատ բան որոշվի այստեղ:

Նախագահող - Ես օրինագիծը քվեարկության եմ դնում:

Օրինագիծն անցնում է ամբողջությամբ և հանձնվում խմբագրական հանձնաժողովին: Էսդեկների հավելումը՝ 8 ձայն կողմ ունենալով, չի անցնում:

Նախագահող - Անցնում ենք ֆելդշերների պարտադիր կուրսերի օրինագծին: Ո՞վ է զեկուցում:

Ձայներ - Զեկուցող չկա:

Վրացյան - Նախագահությունը պետք է հետևի և իմանա, թե ով ինչի մասին պիտի զեկուցի: Այդպես չի կարելի: Չէ՞ որ խորհրդի աշխատանքներն են դանդաղում:

Նախագահող - Այս օրինագիծն ուղարկել ենք բժշկասանիտարական, դպրոցական և օրենսդրական հանձնաժողովներին: Անցնում եմ օրակարգի մյուս խնդրին՝ Քաղաքների միության ծառայողների լիկվիդացիային:

Աղբալյան - Այս հարցի մասին վաղուց է զեկուցվել: Ասացին, որ շատերն իրավունք չունեն ստանալու և հետաձգվեց: Իսկապես քննությունը պարզեց, որ մի քանիսներին չպիտի տալ և նոցա անունը ջնջվեց: Միայն այդ փոփոխությունն է կատարվել, ուրիշ ոչինչ: Կարդում է օրինագիծը:

Օրինագիծ
Քաղաքների միության ծառայողների լիկվիդացիայի մասին

1. Քաղաքների միությունից ընդունված շարժական գույքը համարել Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն և գնահատելուց հետո՝ ընդունել իբր գանձարանի սեփականություն:

2. Ֆինանսների մինիստրին բանալ 17.919 ռ[ուբլի] 50 կ[ոպեկ] վարկ՝ Քաղաքների միության ծառայողներին լիկվիդացիա տալու համար, համաձայն Քաղաքների միության լիազորների ներկայացրած ցուցակի:

Ալ. Մելիք-Աղաջանյան - Օրինագիծը վերաբերում է միայն էջմիածնի շրջանի ծառայողներին, բայց Քաղաքների միությունն ուներ և ուրիշ շրջաններ, որոնց ծառայողները ևս պիտի լիկվիդացիոն գումարներ ստանան: Բացի այդ, Քաղաքների միության ընդհանուր լիազորի տված տեղեկությունների համաձայն կան ծառայողներ, որոնք ռոճիկ չեն ստացել, ուր մնաց թե լիկվիդացիոն: Ուրեմն առաջ այսպիսի ծառայողների ռոճիկը պիտի տալ: Ընդունվեց այն, որ եթե Սոգորի (Քաղաքների միության) ծառայողները մտել են պետական ծառայության իրենց պաշտոնից արձակվելու առաջին օրից սկսած, ապա այդպիսիներին լիկվիդացիոն գումար չպիտի տալ: Իմ կարծիքով, մենք ոչ մի հիմք չունենք խտրություն դնելու այդ և մյուս հասարակական հիմնարկությունների մեջ: Եթե մեկին տալիս ենք, մյուսներին էլ պիտի տանք:

Բուդաղյան - Ֆինանսական կոմիսիան որոշել է Քաղաքների միության ծառայողների պարտքը տալ: Բայց հետաքրքիր է գիտենալ, մեր պա՞րտքն է շատ, թե այն գույքը, որ այդ հիմնարկությունից մեզ է մնացել: Այդ բանը գիտե՞ ֆինանսական կոմիսիան, թե ոչ, որովհետև և ոչ մի դեպքում հնարավոր չէ քիչ ստանալ և ավելի շատ վճարել:

Ա. Բաբալյան - Քաղաքների միության գույքը ստանալ չի նշանակում նրա պարտքը տալ: Քաղաքների միությունը համառուսական մի հիմնարկություն էր, և այն բոլորը, ինչ որ մնացել է մեր տերիտորիայի վրա, նա մեր սեփականությունն է և դրա համար ոչ մի լիկվիդացիոն չպիտի վճարել: Թիֆլիսում մի հատուկ կոմիտե կա, որ Քաղաքների միության լիկվիդացիայի գործով է զբաղվում: Թող այդ ծառայողները դիմեն այնտեղ: Անհատապես ես գտնում եմ, որ այդ գույքը մերն է, ծառայողների պարտքը մենք չենք, որ պիտի վճարենք: Բացի այդ, ես խնդրում եմ միջոցներ ձեռք առնել, որ Թիֆլիսում մնացած գույքի մի մասը ևս փոխադրվի մեր երկիրը:

Ն. Աղբալյան - Սա առևտրի պես մի բան է: Սոգորի ընդհանուր լիազորը գույքը ծախում է մեզ, որի փոխարեն մենք այդ հիմնարկության ծառայողներին լիկվիդացիոն ռոճիկ ենք տալիս և այն էլ միայն այս ցուցակի համեմատ: Նոր ցուցակներ ոչ մեզ տվել են և ոչ էլ ցանկալի է մեզ համար: Ֆինանսական կոմիսիային միայն այս ցուցակն են ներկայացրել և այս ցուցակով ենք վճարումը կատարում: Այն հարցին, թե գու՞յքն է շատ, թե մեր տված գումարը, ես պիտի ասեմ, որ նրանցից ստացած ապրանքների հետ համեմատած մեր գումարը շատ չնչին է: Իմ կարծիքով առանց երկար քննության պիտի ընդունել այս օրինագիծը:

Ալ. Մելիք-Աղաջանյան - Լիկվիդացիայի հարցը ընդհանուր է և ոչ մասնավոր: Առաջարկում եմ հետաձգել օրինագծի քննությունը և ընդհանուր լիազորին խնդրել, որ լիկվիդացիայի հարցն ընդհանուրի վերաբերյալ առաջարկի:

Զաքարյան - Ո՞վ պետք է ընդհանուր լիկվիդացիայի հարց առաջ բերի:

Վ. Տեր-Թորոսյան - Այդ հարցը վաղուց է դրված: Կառավարությունը դեռ շատ առաջ որոշել է, որ Հայաստանի սահմաններում գտնված բոլոր ծառայողներին պիտի լիկվիդացիոն գումար տալ; Բայց մի այլ որոշմամբ, այն է՝ եթե ծառայողն անմիջապես պետական ծառայության է մտել, նրան լիկվիդացիոն չպիտի տալ: Ես կարծում եմ, որ Քաղաքների միության ծառայողների ընդհանուր ցուցակը պիտի բերել և բոլորին տալ:

Կ. Գյուլնազարյան - Մեր ֆրակցիան կարծում է, որ այդ պահանջները պիտի բավարարել, մանավանդ որ ստանում ենք միլիոնից ավել արժողություն ունեցող գույք, իսկ դրա փոխարեն տալիս ենք ընդամենը 19.000 ռ[ուբլի]: Առաջարկում ենք լիկվիդացիոն տալ նաև այն ծառայողներին, որոնք պետական ծառայության մեջ են մտել: Մենք հաստատում ենք այդ օրինագիծը:

Ն. Աղբալյան - Կարդում է օրինագծի հին խմբագրությունը.

1. Քաղաքների միությունից ընդունած շարժական գույքը համարել Հայաստանի պետական սեփականություն և գնահատելուց հետո ընդունել իբր գանձարանի մուտք:

2. Ֆինանսների մինիստրին բանալ 21.249 ռ[ուբլի] 50 կ[ոպեկ] վարկ՝ Քաղաքների միության ծառայողներին լիկվիդացիա անելու համար, համաձայն Քաղաքների միության լիազորի ներկայացրած ցուցակի:

Ապա կարդում է նոր խմբագրությունը.

1. Քաղաքների միությունից ընդունած շարժական գույքը համարել Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն և գնահատելուց հետո ընդունել իբր գանձարանի սեփականություն:

2. Ֆինանսների մինիստրին բանալ 19.919 ռ[ուբլի] 50 կ[ոպեկ] վարկ՝ Քաղաքների միության ծառայողներին լիկվիդացիա անելու համար, համաձայն Քաղաքների միության լիազորի ներկայացրած ցուցակի:

Ընդունվում է վերջին խմբագրությունը՝ տասնինն հազար ինն հարյուր տասնինը ռուբլի 50 կ[ոպեկ] վարկով:

Քվեարկվում է էսդեկների առաջարկը, որ չի անցնում:

Նախագահող - Հարցը համարելով սպառված, անցնում եմ օրակարգի մյուս խնդրին:

Կ. Գյուլնազարյան - Մինաս Բերբերյանը մեռավ ամենավատ պայմաններում: Նա եկավ այստեղ լծվելու շինարար աշխատանքի՝ հոգուտ մեր երկրի: Մինաս Բերբերյանը իր պատանեկության հենց առաջին օրից նվիրվել էր հայ կյանքին, որի համար աշխատեց մինչև վերջ: Հայաստանի համար նա մի անփոխարինելի ծառայություն մատուցեց, այն, որ նրա ջանքներով այստեղ բերվեց նոր ռադիոկայանը: Ճիշտ է, Մինաս Բերբերյանը բանկային պաշտոնյա էր, բայց նրա ընտանիքն ապահով վիճակի մեջ չէ: Հայ ժողովրդական կուսակցության ֆրակցիան խորհրդարանին առաջարկում է իբր հարգանքի արտահայտություն հոգալ նրա հիվանդության և թաղման ծախքերը, որ ընդամենը 17.950 ռուբլի է:

Մինախորյան - Զեկուցումն անցանկալի ընթացք ստացավ: Դուրս է գալիս, թե պետք է տալ նրա հիվանդության և թաղման ծախքը, որովհետև նա շատ գործ է կատարել: Ես հասկանում եմ, եթե այստեղ առաջարկություն լիներ օգնել նրա ընտանիքին: Իսկ եթե առաջարկվում է հոգալ մեկի թաղման ծախքը, ապա ինչու՞ չհոգալ բոլոր պետական ծառայողներինը:

Գյուլնազարյան - Շատ երկրներում է ընդունված այդ իբրև հարգանքի արտահայտություն: Հենց մեզ մոտ էլ մի քանի այդպիսի դեպքեր են եղել: Ոչ ոք չի մոռացել, որ խորհուրդը որոշեց օգնել հանգուցյալ Կարճիկյանի և Վիշինսկու ընտանիքներին: Պատգամավորներին խնդրում եմ ի նկատի ունենալ, որ հարցը շատ է փափկանկատ:

Վրացյան - Մենք ամենամեծ հարգանքն ունենք դեպի Բերբերյանը և նրա գործունեությունն ու դերը մեզ համար չափազանց գնահատելի են: Բայց օրինագիծն ամբողջովին և այն էլ այդ ձևով չենք կարող ընդունել: Այստեղ կարելի է դնել նրա ընտանիքի ապահովության հարցը, որի դեմ մենք ոչինչ առարկել չենք կարող, քանի որ նախընթաց դեպքեր եղել են: Բայց հոգալ հիվանդության և թաղման ծախքերը չենք կարող: Գուցե խորհուրդը հարմար դատի այդ ծախքի միայն մի մասը, այն է՝ թաղման ծախքը վճարել, մանավանդ որ այդ ծախքը բաժանված է ընդհանուր ծախքից: Մենք ոչինչ դեմ չենք ունենա, եթե խորհուրդը որոշի տալ 4.000 ռ[ուբլի]:

Ազատյան - Դրամով չէ, որ մենք պիտի կշռենք հասարակական գործչի արժեքը: Նախագահության ձեռքի տակ կա մի հատուկ օրինագիծ՝ բոլոր պաշտոնյաների թաղման ծախքը հոգալու մասին: Ինձ թվում է, ավելի հարմար կլիներ հետաձգել այդ խնդիրը, մինչև նոր օրինագծի քննությունն ու լուծումը: Ասում են, որ այդ գումարը հարգանքի արտահայտություն է: Բայց մի երկիր, որտեղ օրական հարյուրավոր գաղթականներ են մեռնում սովից ու համաճարակից, հնարավորություն ու՞նի արդյոք նման մի գումար հատկացնել թաղման համար: Ծայրահեղ

դեպքում մեր ֆրակցիան կարծում է, որ հնարավոր է հոգալ միայն թաղման ծախքը:

Նախագահող - Քվեարկում եմ էսդեկների առաջարկը՝ այդ խնդրի քննությունը հետաձգել մինչև հատուկ օրինագծի վերջնական լուծումը: Այս առաջարկը չի անցնում: Քվեարկում եմ մյուս առաջարկը՝ տալ ամբողջ ծախքը՝ և հիվանդության և թաղման: Այս ևս չի անցնում:

Գյուլնազարյան - Մենք հետ ենք վերցնում օրինագիծը:

Բուդաղյան - Դուք իրավունք չունեք հետ վերցնելու: Չէ՞ որ մենք միայն հարգանքի ձևի մասին ենք խոսում և ոչ թե դրամի քանակության:

Գյուլնազարյան - Մենք համաձայն չենք ձեր առաջարկին և իրավունք ունենք հետ վերցնելու:

Վրացյան - Մեր ֆրակցիան առաջարկում է հոգալ միայն թաղման ծախքը:

Նախագահող - Քվեարկում եմ դաշնակցության ֆրակցիայի առաջարկը: Անցնում է:

Վ. Տեր-Թորոսյան - Ինձ հանձնարարված է զեկուցել Պարսկաստան ուղարկված դելեգացիային վարկ տալու խնդրի մասին: Կառավարությունն այս առթիվ առաջարկում է հետևյալ օրինագիծը.

Օրինագիծ
պարսից պատվիրակության համար 30.000 ռ[ուբլի] վարկ բանալու մասին

Բաց թողնել արտաքին գործերի մինիստրին երեսուն հազար (30.000) ռուբլի վարկ՝ բավարարելու Պարսկաստան ուղարկված պատվիրակության ծախսերը՝ համաձայն ներկայացված նախահաշվի:

Վրացյան - Օրինագծի վրա մակագրված է շտապողական, այնինչ հունվարի 14-ից մինչև այժմ նա դեռ չի առաջարկված պառլամենտին: Նախագահության ուշադրությունն ենք հրավիրում դրա վրա:

Մինախորյան - Նախ և առաջ ինձ զբաղեցնում է այն հարցը, թե ինչու՞ է վերջին օրերս դաշնակցությունը հարձակվում նախագահության վրա: Տվյալ դեպքում մեղավորը ոչ թե նախագահության այժմյան կազմն է, այլ Սահակյանը, որի օրով է ստացված դելեգացիայի օրինագիծը: Խոսելով բուն հարցի մասին, պիտի նկատեմ, որ կառավարությունը մեզ դնում է կատարված փաստի առաջ: Հայտնի է, որ արդեն իսկ դելեգացիան գնացել է, ծախսերը արված են: Այս բոլորն անելուց հետո նոր միայն կառավարությունը մեզնից վարկ է խնդրում: Այս ձևով չի կարելի օրինագիծ ներկայացնել պառլամենտին: Այս պատճառով էլ մեր ֆրակցիան կքվեարկի այս օրինագծի դեմ:

Զաքարյան - Սույն օրինագծի ուշ քննելը նախագահության մեղքը չէ: Թուղթը վաղուց ուղարկված է եղել ֆինանսական կոմիսիային:

Ազատյան - Այս խնդրի քաղաքական կողմն է մեզ հետաքրքրում: Պառլամենտը դառնում է մի տեսակ շիրմա՝ կառավարության գործողությունները քողարկելու համար: Եթե իր ժամանակին դրվեր պառլամենտի առաջ, այն ժամանակ պառլամենտը կարող էր քննել և քննելը իմաստ ուներ: Բայց այժմ այլևս քննելն ավելորդ է: Եթե ծախսերը պիտի անեք առանց պառլամենտի, այն ժամանակ ինչի՞ համար է պառլամենտը: Պետք է այդպիսի ոտնձգություններին վերջ դրվի: Այս պատճառներով էլ մենք չենք կարող առաջարկված օրինագծին թեր քվեարկել:

Մինիստր-նախագահ - Հարկ եմ համարում մի քանի բացատրություններ տալ արտասանած ճառերի վերաբերմամբ: Իհարկե, կառավարությունը կարող էր վարկ ստանալու օրինագիծը առաջարկել պառլամենտին՝ նախքան դելեգացիայի գնալը: Սակայն խնդիրը նրանումն է, որ որքան էլ խնդիրները շտապողական են լինում, համենայն դեպս պառլամենտը հնարավորություն չի ունենում նոցա իր ժամանակին քննել: Այնինչ մենք պիտի շտապ կերպով ուղարկեինք պարսկական դելեգացիան: Այն մասին, թե կառավարությունը իրավունք ու՞ներ

այդպիսի քայլ անելու, պիտի պատասխանել, որ արտաքին գործոց մինիստրության իրավասության սահմանների մեջ է զանազան պետությունների մոտ պատվիրակություն ուղարկելը: Անցնելով այն հարցին, թե կառավարությունը իրավունք ու՞ներ ծախսեր անելու, թե ոչ, կպատասխանեմ, որ արտաքին գործոց մինիստրության տրամադրության տակ կա մի գումար, որից կարող է օգտվել նախարարը պատվիրակություններ ուղարկելու ժամանակ: Եվ եթե այսօր կառավարությունը խնդրում է վարկ, այդ նրա համար է, որովհետև ծախսերը շատ են եղել: Եթե պառլամենտը չընդունի ներկայացված օրինագիծը, այն ժամանակ կառաջարկվի նրան մի ուրիշ օրինագիծ՝ պատվիրակությունների համար հատկացված գումարի հավելման մասին:

Ինչ վերաբերում է պատվիրակության նպատակին, պիտի հայտնեմ, որ նա գնում էր Նախիջևանի գաղթականության և Նախիջևանի կառավարության միջև մի modus vi-vendi ստեղծելու, պարսկական կառավարության հանդեպ փոխադարձ այցի ձևով քաղաքավարական մի ակտ կատարելու և Հայաստանի անկախության մասին պարսկական կառավարության հայտարարելու համար: Այլ նպատակներ չէին մտնում դելեգացիայի առաքման մեջ:

Նախագահող - Առաջարկում եմ զեկուցողին կարդալ օրինագիծը:

Վ. Տեր-Թորոսյան - Կարդում է օրինագիծը.

«Բաց թողնել արտաքին գործերի մինիստրին երեսուն հազար (30.000) ռ[ուբլի] վարկ՝ բավարարելու Պարսկաստան ուղարկված պատվիրակության ծախսերը՝ համաձայն ներկայացված նախահաշվի»:

Նախագահող - Քվեարկում եմ: Ո՞վ է համաձայն:

Անցնում և ընդունվում է: Անցնում ենք Ամերիկա ուղարկվելիք պատվիրակության օրինագծի քննության:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Ներկայացված է մի օրինագիծ բացատրական գրությամբ:

Օրինագիծը հետևյալն է.

Օրինագիծ
Մինիստր-նախագահի Եվրոպա և Ամերիկա ուղևորության համար 430.000 ռ[ուբլի] վարկ բանալու մասին

1. Հանձնարարել Մինիստր-նախագահին ուղևորվել Եվրոպա և Ամերիկա, դիմել Հայաստանի Խորհրդի անունից համաձայնության պետությունների և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարություններին և խնդրել նրանց օգնությունը՝ ներմուծելու երկիր Հայաստանին պակասող պարենը և առաջին անհրաժեշտության ուրիշ ապրանքներ:

2. Ուղևորության ծախսերը ծածկելու համար բաց թողնել Մինիստր-նախագահին 430.000 ռ[ուբլի] վարկ:

Ֆինանսական հանձնաժողովը քննելով սույն օրինագիծը, եկավ հետևյալ եզրակացության.

Զեկուցում

«Ֆինանսա-բյուջետային հանձնաժողովը հունվարի 30-ին քննելով կառավարության օրինագիծը, Մինիստր-նախագահին Եվրոպա և Ամերիկա ուղևորելու մասին՝ պարեն և ուրիշ պիտույքներ Հայաստան ուղարկելու մասին՝ և նախահաշիվը 430.000 ռ[ուբլի] ընդամենը և լսելով իրեն՝ Մինիստր-նախագահին, միաձայն որոշեց ընդունել շտապողականությունը և ամբողջ օրինագիծը: Աչքի առաջ ունենալով, որ այդ գումարը անբավարար է, այդ պատճառով որոշեց այդ գումարը հասցնել կես միլիոնի և այդ 70.000 ռ[ուբլի] ավելացածը ավելացնել Մի-

՝ Բնագրում այդպես է, պետք է լինի՝ «համար»:-Ճանոթ. կազմ.:

նիստր-նախագահին տրվելիք 150.000-ի վրա՝ դարձնելով այն 220.000 ռ[ուբլի] առանց հաշվետվության»:

Մինախորյան - Մենք չենք ժխտում Ամերիկա պատվիրակություն ուղարկելու անհրաժեշտությունը: Սակայն մենք ընդունում ենք, որ այս պատվիրակությունը պիտի գնա միայն մեր երկրից սովը վերացնելու համար: Այնինչ, նրա վրա դրվում են մի շարք այնպիսի գործեր, որպիսիք զանազան ապրանքներ ձեռք բերել, դրամական փոխառություններ անել, ինֆորմացիայով զբաղվել և այլն: Ստացվում է մի բարդ գործ, որի համար պահանջվում է 1/2 միլիոն ռուբլի: Մենք արդեն իսկ ասել ենք, որ ինֆորմացիայի վրա արված ծախսն իզուր է: Սակայն եթե կենտրոնը անհրաժեշտ է համարում ինֆորմացիա ունենալ Ամերիկայում, այն ժամանակ նա պիտի անջատի այս գործը սովի դեմ կռվելու համար գնացող պատվիրակությունից: Գնալով բյուջեին, պիտի հայտնենք, որ սկզբունքային առարկություն ունենք նրա դեմ: Առաջարկվում է 170.000 ռ[ուբլի] վարկ տալ առանց հաշվետվություն պահանջելու: Անցել են գաղտնիքների շրջանը: Ապա ասում է, թե կառավարության գլուխը պիտի գնա: Մեզ թվում է, որ ով էլ գնա, այդ միևնույնն է, բավական է, որ նա լինի մեր հանրապետության կողմից: Այնուհետև մեզ թվում է, որ այս գործի մեջ ոչ թե կարիք կա բարձր մարդու, այլ հմուտ մասնագետի: Մինիստր-նախագահի գնալն ունի և մի այլ անհարմարություն: Դրանով նախ և առաջ քայքայվում է մեր կառավարությունը: Նախագահը 3 ամիս պիտի բացակայի, մի քանի մինիստրներ Թիֆլիսում են, որոնց վերադարձը կասկածելի է: Ապա՝ ինչպես հայտնի է, որոշ շրջաններում մտադրություն կա փոխել այժմյան կառավարության, սկսած նրա նախագահից: Անհարմար դրություն կստեղծվի, որ որպես նախագահ ուղարկված պարոն Քաջազնունին Ամերիկա եղած ժամանակ թողնի այդ պաշտոնը:

Մինիստր-նախագահ - Պատգամավորության միակ նպատակը հաց և այլ կենսական մթերքներ ձեռք բերելն է: Մենակ հացի բացակայությունը չէ, որ մեզ գցել է կրիզիսի մեջ, այլև բոլոր անհրաժեշտ մթերքների բացակայությունը:

Անցնելով փոխառության, պարզ է, թե որքան խոշոր նշանակություն ունի նա մեր հանրապետության բարեկեցությունը բարձրացնելու խնդրում: Այս խնդիրներից դուրս քաղաքական ոչ մի նպատակ չունի դելեգացիան: Առանձնապես չի կարելի խոսել քաղաքական նպատակների մասին: Ինֆորմացիա գաղափարի հասկացումը սխալ է եղել ընկ[եր] Մինախորյանի կողմից: Ինֆորմացիա պիտի արվի միմիայն վերոհիշյալ խնդիրների շուրջը, առանց մտնելու այլ քաղաքական հարցերի մեջ:

Անցնելով գումարին, պիտի հայտնեմ, որ ի նկատի ունենալով մեր բոների արժեքը, դեռ նա քիչ է: Ապա ինչ վերաբերում է այն ծախքերին, որոնց համար հաշիվ չպիտի ներկայացվի, կասեմ, որ դրանց հաշիվը հրապարակով ներկայացնելը և մեզ, և նրանց, որոնց վրա արվում են այս ծախսերը, անհարմար է: Գալով այն հարցին, թե ինչու պիտի Մինիստր-նախագահը գնա, ես կասեմ, որ ճիշտ է այն նկատողությունը, թե կարիք կա մասնագետների և ոչ բարձր դիրքում մարդկանց: Սակայն դա ճիշտ է այն չափով, որքան պատվիրակության վրա նայվում է որպես առևտրական գործեր կատարողի: Բայց մյուս կողմից էլ հայտնի է, որ մենք դիմում ենք Ամերիկային ոչ որպես առևտրական կապ հաստատող մի կողմ, այլ որպես օգնություն խնդրող: Ամերիկայի օգնելը այն չափով կկատարվի, ինչ չափով որ նա համոզված լինի մեր երկրի անելանելի կացության մեջ գտնվելու մեջ: Դրա համար է, որ պիտի մեր դժվարությունը ապացուցելու համար ուղարկենք մեր հանրապետության գլխին՝ Մինիստր-նախագահին:

Մուշեղյան - Փարիզից ինչու՞ պիտի երկու մարդ միանա պատվիրակության:

Մինիստր-նախագահ - Պատվիրակության ավելի տեղյակ և հեղինակավոր դարձնելու համար: Քաղաքական ոչ մի նպատակ չունի դա: Մեր քաղաքական գործերը վարելու համար արդեն իսկ ուղարկված է մի հատուկ դելեգացիա:

Վրացյան - Մենք առանձին կարևորություն ենք տալիս պրոպագանդային, բայց ոչ Մինախորյանի իմաստով, այլ օգնության հաջողեցման համար, մի այնպիսի վայրում, ուր հասարակական կարծիքն ահագին նշանակություն ունի: Այդ

խնդրում խոշոր դեր կարող են կատարել Ամերիկայում եղած հարյուր քսան հազար հայերը: Պետք է դրանց տեղյակ պահել մեր երկրի կացության: Դրա համար էլ առաջարկում ենք հատուկ այս նպատակով դելեգացիայի հետ ուղարկել նաև երկու հոգի հասարակական գործիչ:

Մինիստր-նախագահ - Ես մոռացա հայտնել, որ մինչև բացակա մինիստրների գալը ես չեմ գնա Ամերիկա:

Մուշեղյան - Սակայն չպարզվեց, թե բացակայության ժամանակ ո՞վ պիտի լինի Մինիստր-նախագահ և ինչպե՞ս հնարավոր է նրան փոխել:

Մինիստր-նախագահ - Պարզ է, որ իմ գնալու ժամանակ պառլամենտի կողմից մի պատասխանատու պաշտոնակատար պիտի ընտրվի, որը և կվարի պետական գործերը իմ բացակայության ժամանակ:

Ազատյան - Մինիստր-նախագահի գնալուն մենք դեմ ենք: Կարող է բանակցությունների կեսին նա փոխվել, մի բան, որ կազդի դելեգացիայի վարկի վրա: Մեր կարծիքով, եթե պիտի գնա պ[արոն] Քաջազնունին, լավ է, որ գնա նա ոչ թե որպես Մինիստր-նախագահ, այլ որպես դելեգացիայի նախագահ: Մեր կարծիքով, եթե Մինիստր-նախագահը և արտաքին գործոց նախարարը չփոխվեն, հնարավոր չի լինի Ադրբեջանի և Վրաստանի վրայով հացահատիկ ներմուծել: Ապա մենք առաջարկում ենք, որ առանց ցրվելու մեր դելեգացիան միայն կենտրոնական վարչության հետ գործ ունենա:

Նախագահող - Սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիան առաջարկում է, որ «Կառավարությունը առաջիկա նիստին նոր օրինագիծ ներկայացնի Ամերիկա պատգամավորություն ուղարկելու համար՝ ցորեն գնելու նպատակով, հատկացնելով այդ գործին պարենավորման գործին ծանոթ մասնագետներ»: Ո՞վ է համաձայն: Չի անցնում: Ո՞վ է համաձայն, որ Քաջազնունին գնա լոկ որպես դելեգացիայի նախագահ, ինչպես առաջարկում է սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան: Չի անցնում: Ո՞վ է համաձայն դաշնակցության առաջարկին՝ երկու գործակից տալ դելեգացիային: Անցնում է: Ո՞վ է համաձայն անցնել հոդվածային քննության: Անցնում է:

Ս. Տեր-Մարտիրոսյան - (Կարդում է օրինագիծը):

Որովհետև դելեգացիան 2 հոգով ավելացավ, ուրեմն գումարն էլ պիտի ավելանա:

Նախագահող - Առաջարկ կա 430.000 ռուբլին հասցնել 550.000 ռուբլու: Ո՞վ է համաձայն: Անցնում է: Ամբողջ օրինագծին ո՞վ է համաձայն: Անցնում է: Ո՞վ է համաձայն համարել 2-րդ, 3-րդ ընթերցումը կատարված և խմբագրությունը: Անցնում է: Նիստը հայտարարում եմ փակված:

Քարտուղար՝ *Ե.Սարգսյան*

ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թթ. 102-118: Բնագիր: Ձեռագիր: